

ՎԱՀԵ ՌՈՄԻԿԻ  
ԳԵՎՈՐԳՅԱՆ

Երևանի Կոմիտասի անվ. պետական  
կոնսերվատորիայի երաժշտագետ, բակալավր, 2-րդ կուրս  
E-mail: [vahegevorgyan405@gmail.com](mailto:vahegevorgyan405@gmail.com)  
Doi:10.58580/18290019-2024.1-2-120

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի  
երաշխավորությամբ՝ Ալինա Աշոտի Փահլևանյանի՝ 30.10.2024 թ.,  
ընդունվել է տպագրության՝ 5.11.2024 թ.,  
ներկայացրել է հեղինակը՝ 20.10.2024 թ.:  
© Հեղինակ, 2025: Հասանելի է Creative Commons Attribution  
4.0, 3.0 Licence-ին համապատասխան:

Ընթերցվել է գիտաժողովին 2024 թ. աշնանային ուսանողական գիտաժողովին  
Մասնագիտական ղեկավար՝ արվ. թեկնածու, պրոֆեսոր Ալինա Աշոտի Փահլևանյան

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԸ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ  
(նվիրվում է Վերժինե Սվազլյանի ծննդյան 90-ամյակին)\*

**Անվտանգություն**

Անվանի բանահավաք, գեղասպանագետ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վերժինե Սվազլյանի գրառած բանահյուսական նյութերն ու Հայոց գեղասպանության ակնատես-վերապրողների հուշ-վկայությունները բացառիկ արժեք ունեն ոչ միայն գեղասպանագիտության այլ նաև մի շարք հարակից գիտությունների համար, որոնց թվում նաև՝ երաժշտական հայագիտության: Վերոհիշյալ գրառումների, ինչպես նաև այլ նյութերի ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում հայ ժողովրդական երգը դիտարկել մշակութային գեղասպանության համապատկերում: Այննայտ է, որ թուրքական, ավելի ուշ շրջանում նաև ադրբեջանական գեղասպանության քաղաքականության գոհ է դարձել նաև հայկական երաժշտական մշակույթը, սակայն այս խնդրի ուսումնասիրումը երաժշտագիտական լույսի ներքո՝ մեծ մասամբ մնացել է ստվերում: Հիշատակելի են Ռոբերտ Աթայանի և Անահիտ Բաղդասարյանի հոդվածները, որոնցում հեղինակները ուսումնասիրման տարբեր նպատակներ հետապնդելով, որոշակիորեն անդրադարձել են խնդրի թեմային: Ներկա հոդվածի շրջանակներում փաստագրական և բանահյուսական նյութերի ուսումնասիրությամբ, փորձել ենք երաժշտական հայագիտության տեսանկյունից ներկայացնել գեղասպանագիտական խնդիրների ուսումնասիրումը:

**Բանալի-բառեր.** Հայոց գեղասպանություն, երաժշտական հայագիտություն, մշակութային գեղասպանություն, Ռաֆայել Լեմկին, Արցախ, բռնագաղթ, Կոմիտաս Վարդապետ, ժողովրդական երգ, Վերժինե Սվազլյան:

**Abstract**

2nd-Year Bachelor Degree Student at the Musicology Department of Yerevan Komitas State Conservatory Vahe Romik Gevorgyan. - "The Armenian folk song in the context of cultural Genocide (Dedicated to the 90th Anniversary of Verzhine Svazlian)".

The folkloric materials and eyewitness-survivor testimonies of the Armenian Genocide recorded by the renowned folklorist, genocide scholar, Doctor of Philological Sciences, and Professor Verzhine Svazlian hold exceptional value not only for Genocide Studies but also for a number of related disciplines, including Armenian musicology. The study of the aforementioned recordings, as well as other materials, makes it possible to view the Armenian folk song in the context of cultural genocide. It is evident that Armenian musical culture also fell victim to the genocidal policy of the Turks, and later the Azerbaijanis; however, the study of this issue from a musicological perspective has largely remained in the shadows. Worth mentioning are the articles by Robert Atayan and Anahit Baghdasaryan, in which the authors, pursuing different research objectives, have touched upon this topic, to a certain extent. Within the scope of the present article, through the study of documentary and folkloric materials, we have attempted to present the study of genocide-related issues from the standpoint of Armenian musicology.

**Key Words:** Armenian Genocide, Armenian musicology, cultural genocide, Raphael Lemkin, Artsakh, forced displacement, Komitas Vardapet, folk song, Verzhine Svazlian.

\* Վերժինե Սվազլյան (ծնվ.՝ 1934 թ.) – բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող: Ավելի քան կեսդարյա գիտական գործունեությամբ, Վ. Սվազլյանը հայ բանագիտության պատմությունը հարստացրեց իր արժեքավոր ուսումնասիրություններով: Իր ողջ կյանքը նվիրելով Հայոց գեղասպանության ակնատես-վերապրողների հուշ-վկայությունների գրառման, ուսումնասիրման և հրատարակման գործին, Վ. Սվազլյանը հայ ժողովրդի ձայնը լսելի դարձրեց ողջ աշխարհին: Նրա ուսումնասիրությունները թարգմանվել և հրատարակվել են ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, թուրքերեն լեզուներով:



## Նվիրվում է Վ.Սվազլյանի ծննդյան 90-ամյակին

«Հայկաշէն» հանդեսում: «Կոմիտաս Քեթսահեացի էր, - գրում է Հ. Էդիպը, - եւ շատ աղքատ ծնողքէ սերած: Անոնք հայերէն չէին գիտեր եւ Կոմիտաս զայն սորվեցաւ շատ վերջը. իր ծնողները հաւանաբար թրքական ծագում ունէին, այն թուրքերէն որոնք Գրիգորեան եկեղեցիին յարած էին... Հայ ազգայնական մըն էր ան, իր ծագումը թրքական ըլլալ թէ հայկական, բայց խառնուածքով ու սրտով իսկ եւ իսկ Անատոլիացի Թուրք մըն էր, թերեւս անգիտակից» (4. էջ 66): Հ. Էդիպի այս գառանցանքները ճշգրտորեն համապատասխանում են երիտթուրքերի վարած քաղաքականությանը: Պատմական փաստերի կեղծարարությամբ զբաղվող թուրքերին, որքան հեռուն կարող է տանել Էդիպի վերոհիշյալ գրությունը:

Զավթողական քաղաքականության հետևանքով փտանգված առանձին երգերից ամենահայտնի օրինակը թերևս «Սարի աղջիկ» երգն է: Բոլորովին վերջերս լույս տեսավ բանասիրական գիտությունների թեկնածու Արտակ Վարդանյանի և արվ. թեկնածու Ալինա Փահլևանյանի համատեղ ուսումնասիրությունը վերոհիշյալ երգի մասին (5.): Երաժշտաբանաստեղծական տեքստերի քննությամբ հեղինակները հերքում են աղբյուրային տեքստերի ստեղծմանը և մի շարք փաստեր ասպարեզ բերելով՝ ապացուցում են այս երգի հայկական ծագումը: Ի դեպ, նմանատիպ հակափաստարկ-ուսումնասիրությունները կարևոր են մեր բողոքն ու ընդվզումը թշնամական կեղծարարությունների դեմ պայքարի գործում:

Վստահաբար կարող ենք փաստել, որ ցեղասպանագիտության մեջ մշակութային ցեղասպանության առնչվող ուսումնասիրություններում մեծ մասամբ քննության առարկա են դարձել ճարտարապետական կոթողներն ու հուշարձանները: Իհարկե անվիճելի է այն փաստը, որ ժողովրդական երգը ևս այս շրջանում զոհ է դարձել թշնամական ոճագործություններին: Սակայն, քանի որ երաժշտությունը ժամանակային արվեստ է, իսկ ժողովրդական երգը բանավոր ավանդույթով փոխանցվող արվեստ, ապա ի տարբերություն ճարտարապետության, երաժշտության բնագավառում դժվար է արձանագրել այն բոլոր վնասները, որոնք կրել է ժողովրդական երգը: Հիշենք, որ ԺԹ դարի երկրորդ կեսից միայն սկսվեց ժողովրդական երգերի հավաքական աշխատանքները, որոնցով զբաղվում էին Մահակ վրդ. Ամատունին (1856-1917), Արշակ Բրուտյանը (1864-1936), Ստեփան Դեմուրյանը (1871-1934), Քրիստափոր Կարա-Մուրզան (1853-1902), Մակար Եկմայանը (1856-1905), Կոմիտաս Վարդապետը (1869- 1935) և Սպիրիդոն Մելիքյանը (1880-1933): Փաստորեն, այս բանահավաքների գրառումները արևմտահայության ժողովրդական երգի այն հուշարձաններն են, որոնք այդ երգերը ձայնագրել են իրենց բնօրրանում: Այնուհետև պիտի գային կոտորածի և բռնագաղթի տարիները և արևմտահայության հրաշքով փրկվածները պիտի սփռվեին ամբողջ աշխարհով, իրենց հետ տանելով այն ողջ մշակույթը որի կրողն էին: Թե՛ բնական պայմանները, թե՛ նոր միջավայրն ու կենցաղը՝ որտեղ հայտնվել էին արևմտահայ գաղթականները,

պիտի պատճառ հանդիսանային մշակութային ժառանգության որոշակի տարալուծման համար: Բացի այս ամենը, թերևս ամենամեծ կորուստը դարձավ Կոմիտաս Վարդապետի եղերական ճակատագիրը [6]: Այն անվիճելիորեն համապատասխանում է Ռ. Լեմկինի մշակութային ցեղասպանության բնորոշման հանցագործություններից մեկին, որը ձևակերպված է, որպես «խմբի մշակույթն ու արվեստը ներկայացնող մարդկանց բնաջնջում» (1. էջ 229):

Դառնալով ժողովրդական երգին նշենք, որ ցեղասպանության հետևանքով բռնագաղթված և սփյուռքի տարբեր գաղթօջախներում ապաստան գտած արևմտահայերի բանահյուսական նմուշները անցյալ դարի կեսերին գրառեց և անհետ կորստից փրկեց Միհրան Թումաճանը (1890-1973), ով Կոմիտաս Վարդապետի Պոլսի հինգ սաներից մեկն էր\*: Մ. Թումաճանի հավաքածուն իր ժամանակներում և մասնավորապես այսօր անգնահատելի արժեք է հայ երաժշտական ֆոլկլորագիտության համար: Այս քառասունոր ժողովածուն, որ հրատարակվեց «Հայրենի երգ ու բան» խորագրով, արժանացել է մի շարք մասնագետների գնահատանքի խոսքերին: Ժողովածուի առաջին հատորի ներածական խոսքում Մ. Թումաճանը գրում է, - «Առաջին մասը, որ անվանել ենք Հայրենի երգ ու բան, պարունակում է Արևմտյան Հայաստանի և Թուրքիայի սահմանների մեջ բնակված, այժմ բնավեր եղած հայերի բերնից առնված ու նոտագրած ժողովրդական երգեր և ավանդական հարակից նյութեր: ... Ժամանակն է լծի տակ մտնելու և փնտրելու դեռևս չգտնվածներից գեթ նույնքան և ավելի պատկառելի երգափնջեր, քանի դեռ ուշ չէ: Փնջեր, որ աշխարհի չորս ծագերում ցրված են և գուրգուրոտ ձեռքերի կարոտն ունեն» (7. էջ 14-15):

Հավատարիմ մնալով անցյալում ստեղծված ավանդույթներին, մեր օրերում ևս շարունակվում են հայ երգային բանահյուսության հավաքչական աշխատանքները, որոնք իրականացնում են ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի և ԵՊԿ Հայ երաժշտական ֆոլկլորագիտության ամբիոնի բանահավաքները\*\*, ինչպես նաև անհատ հետազոտողներ: Բանահյուսական նյութը գրառելով մեծ մասամբ ներկայիս Հայաստանի Հանրապետության տարածքում, այդ նյութերը ներկայացնում են ոչ միայն Արևելյան Հայաստանի, այլ նաև Արևմտյան Հայաստանի բանավոր մշակութային ժառանգությունը: Այսպիսով բանահյուսական նմուշների աշխարհագրական ծավալը ընդգրկելով պատմական Հայաստանի գրեթե բոլոր ազգագրական գոտիները:

\* Կոմիտասի Կ. Պոլսի «Հինգ սաներն» էին՝ Բարսեղ Կանայանը, Վաղարշակ Սրվանձտյանը, Վարդան Սարգսյանը, Հայկ Սեմերձյանը և Միհրան Թումաճանը:

\*\* ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի 2008 թ.-ից հրատարակում է «Հայ ավանդական երաժշտություն» մատենաշարը (մինչ օրս հրատարակվել է 13 պրակ), իսկ ԵՊԿ Հայ երաժշտական ֆոլկլորագիտության մարիոնը 2009 թ.-ից հրատարակում է «Հայ ժողովրդական երգեր և նվագներ» մատենաշարը (մինչ օրս հրատարակվել է 15 պրակ):

## Նվիրվում է Վ.Սվազյանի ծննդյան 90-ամյակին

Ինչպես հայտնի է ժողովրդական բանահյուսության ուսումնասիրման գործում առաջնային է հավաքչական աշխատանքի կազմակերպումը, որին հաջորդում է վերծանման և ուսումնասիրման աշխատանքները: Մենք արդեն համառոտ ձևով անդրադարձանք Հայոց ցեղասպանությունից առաջ և հետո իրականացվող ժողովրդական երգերի բանահավաքչական աշխատանքներին, այժմ անդրադառնանք նաև խնդրո թեմային առնչվող հետազոտական աշխատանքներին:

Այս առումով ուշարժան է անվանի երաժշտագետ Ռոբերտ Աթայանի (1915-1994) հոդվածը հրատարակված «Հայկական հարց» հանրագիտարանում (8, 321-323): Իր հոդվածում Ռ. Աթայանն առաջին անգամ դասակարգել է ցեղասպանությանը առնչվող երգերն ըստ ժանրերի, որը ներկայացնում է հետևյալ ձևով. «ա. զանգվածային կոտորածների, ժողովրդի զոհվելու անհիշական նկարագրություններ, որոնք կարելի է անվանել «ցեղասպանության երգեր», բ. ժողովրդի դիմադրության նրան պայքարի կոչող «գոյամարտի» կամ «դիմադրության երգեր», գ. դիմադրությունը կազմակերպած ղեկավարների և մարտերում աչքի ընկած հերոսների (ֆիդայիներ, խմբապետեր, զորավարներ...) մասին՝ «ազգային» կամ «հերոսական գովքեր», դ. ոչ զանգվածային կոտորածների, այլ առանձին անհատներին նկարագրություններ, ամսասանքներ են, որոնք Կոմիտասն անվանել է «պատմադրերգական երգեր», ե. «ազգայնապանական ողբեր և աղերսանքներ»» (8, էջ 321): Ռ. Աթայանի այս հոդվածն առաջին մասնագիտական անդրադարձն է խնդրո թեմային:

Հայագիտության բնագավառում անգնահատելի է անվանի բանահավաք, ցեղասպանագետ Վերժինե Սվազյանի գիտական վաստակը: Իր ավելի քան 60 տարիների գիտական գործունեությամբ Վ. Սվազյանը բանահավաքչական աշխատանքների ընթացքում հավաքագրել է Հայոց ցեղասպանության ականատես վերապրողների հուշերն ու վկայությունները, ինչպես նաև մեծ քանակությամբ երգեր: Պատահական չէ, որ ժամանակակիցները Սվազյանին բնորոշեցին «Հայոց մեծ տիկին» պատվանունով: Նա առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրեց և լսելի դարձրեց ժողովրդի ձայնը՝ ականատես-վերապրողների հաղորդած տեղեկություններն ու նյութերը, որոնք հրատարակվեցին տարբեր լեզուներով: Ցեղասպանագիտության բնագավառում իր բանահավաքչական աշխատանքների հանրագումարը կազմող «Հայոց ցեղասպանություն. ականատես վերապրողների վկայություններ» (9) ստվարածավալ հատորները ներկայացնում են ոչ միայն բանահյուսական նյութերի գրառումներ, այլ նաև դրանց քննական ուսումնասիրությունը՝ գիտական մի շարք բաղադրիչներով հանդերձ (բանասացների կենսագրական տվյալների ցանկեր, բառարան, ցուցիչներ (թեմատիկ, անձնանունների, տեղանունների, էթնանունների), ծանոթագրություններ, լուսանկարներ, ամփոփումներ (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, թուրքերեն, ռուսերեն, հայերեն): Վ. Սվազյանի վերոհիշյալ ուսումնասիրությունը հատկանշական է նաև ժողովրդական երգերի ընդգրկումով և

դրանց ուսումնասիրմամբ: Շուրջ 315 միավոր պատմական հուշ-վկայությունների, 70 միավոր պատմական գրույց-վկայությունների հետ մեկտեղ, ներկայացված են 315 միավոր պատմական երգ-վկայություններ, որոնք իրենց թեմատիկ ընդգրկումով դասակարգված են, որպես՝ 1. Ձորահավաքի, զինահավաքի և բանտարկյալի երգեր, 2. Տեղահանության և կոտորածի երգեր, 3. Որդեկորոյս մայրերի, որբի և որբանոցի երգեր, 4. Հայրենասիրական և հերոսամարտերի երգեր, 5. Բռնագավթված Հայրենիքի և պահանջատիրության երգեր: Այս երգերից 22 միավորն ունեն նոտագրված օրինակներ, որոնց վերծանումն իրականացրել են Ալինա Փահլիսյանը, Մանուկ Մանուկյանը և Կարո Չալիկյանը: Նոտագրված նմուշները հետագայում երաժշտագիտական վերլուծության է ենթարկել արվեստագիտության թեկնածու Անահիտ Բաղդասարյանը (10.):

Վ. Սվազյանն իր վերոհիշյալ գրքում անդրադառնալով ժողովրդական երգերին, իր բնորոշմամբ՝ պատմական երգ-վկայություններին, գրում է, որ այդ երգերը «ժողովրդի օժտված անհայտ անհատների կողմից պատմական խոշոր իրադարձությունների մասին հորինված, ապա բերնից բերան անցած չափածո ստեղծագործություններ են: Պատմական բնույթի երգերը լինում են նաև քնարական բանաստեղծություններ, որոնցում պատկերավոր կերպով արտահայտվում են ստեղծողների հուզաշխարհը, խոհերն ու տրամադրությունները, ակնկալիքներն ու պահանջները: Այդ երգերը ստեղծել են հատկապես տվյալ հասարակական կյանքից դժգոհ, անարդարության, հալածանքի, ճնշման դեմ ընդվզող ու ներքին ողբերգություն ապրող անհատները» (9, էջ 17): Ուշագրավ է այն հանգամանքը, որ հեղինակը բանասացների հաղորդած պատմական թե՛ հուշերի, թե՛ գրույցների և թե՛ երգերի մասին խոսելիս, դրանք բնութագրում է որպես վկայություններ, ոչ ավելորդ անգամ փորձելով ընդգծել բանահյուսական տվյալ ժանրերի հաղորդած փաստավավերագրական նյութերի հավաստիությունը: Ավելին, նա նաև գրում է, որ «իրենք՝ ականատես-վերապրողները, բարոյական պատասխանատվություն և պարտքի գիտակցություն են զգացել իրենց պատմածի նկատմամբ: Նրանցից շատերն իրենց հիշողությունները ինձ հաղորդելուց առաջ խաչակնքել են կամ՝ երդվել: Իսկ երդումը նվիրական խոսք է՝ սրբություն, որը կեղծիք չի ընդունում: Ինչպես, որ երգումսի Լորիս Պապիկյանը (ծնվ. 1903 թ.) սկսել է պատմել իր հուշը. «...Նախ՝ ասեմ, եթե միտումնավոր կերպով գունագարդած լինեմ դեպքերն ու դեմքերը, թող նգովք լինի ինձ և ընդհանուրի արհամարհանքին արժանանամ...»» (9, էջ 15):

Վ. Սվազյանի վերոհիշյալ ժողովածուում մեծ քանակությամբ են կազմում թուրքալեզու երգերը: Քանի որ պատմական հանգամանքներով պայմանավորված հայկական մի շարք բնակավայրերում արգելված է եղել հայերեն խոսելը, իսկ ով կհանդգներ հայերեն խոսել դաժանորեն կպատժվեր թշնամու կողմից: Այս մասին պատմում է նաև ժողովրդական երգը, որը Վ. Սվազյանը գրառել է Սաթենիկ Գույումջյանից (ծնվ. 1902 թ.):

# Նվիրվում է Վ.Սվազյանի ծննդյան 90-ամյակին

«Դարոցը մտան, վարժուհուն բռնեցին,  
Վա յ աման,  
Բերանը բացեցին՝ լեզուն կտրեցին,  
Ա իս աման» (9. էջ 19-20):

Վ. Սվազյանն է նաև առաջին անգամ գրառել և գիտական շրջանառության մեջ դրել «Դեր Ջոր Չեօլլինդե» (Դեր Ջորի անապատում) թուրքալեզու երգաշարը: Ինչպես փաստում է հեղինակը, այս երգաշարից հատվածներ առաջին անգամ նա գրառել է 1956 թ. Եղիսաբեթ Քալաշյանից (ծնվ. 1888 թ. Մուսա Լեռ), որը հրատարակել է իր Մուսա Լեռան ազգագրությանը նվիրված գրքում (11. էջ 130-131): Իսկ արդեն «Հայոց ցեղասպանություն. ականատես վերապրողների վկայություններ» գրքում ներկայացված է այս երգի 69 քայայ: Թե՛ բառերի, և թե՛ մեղեդու տարբերակների նմանությունները հիմք ունենալով, կարող ենք ասել, որ այն տիպական կառույցով երգատեսակ է: Բառային տեքստը աչքի է ընկնում նրանով, որ մեծ մասամբ բոլոր քայայակները ավարտվում են հետևյալ տողով. «Դինինին ուղրունա էօլեն էրմենի» («Հայերն են մեռնում հավատքի համար»): Մեզ հայտնի այս երգատեսակի նոտագրված տարբերակները առայժմ չորսն են՝

1. «Դեր Ջորուն իչինդե նանկեր բիրթեր» (9. էջ 648).
1. "Der Zorun ichindej nanejlejr bither" (9. p. 648)
1. "Дер Зорун ичиндэ нанэлэр битэр" (9. С. 648)

## ԴԵՐ ՋՕՐՈՒՆ ԻՉԻՆԴԵ ՆԱՆԿԵՐ ԲԻԹԵՐ

Երգասաց Եղիսաբեթ՝ Քալաշյան  
Գրառումը վերծին Սվազյանի  
Վերձանությունը՝ Մանուկ Մանուկյանի

Դեր Ջո - բուն ի - չին - դե նա - նե - լեր բի - թեր.  
 4 - մաշ լե - թին քո - քո - սու դան - յու լս ի - քո.  
 քո սար - գաս - քաբ բի - ցի.  
 օ - լա սյու յո - քո.  
 գր - սր - օրս ու էլ՝ քո - սա օ - լա էր - ա - որ.  
 ա - մա - նքմ, յա - ման, հա - լը - մըդ յա - ման,  
 սր ջոր - լա սյու - դե քալ - գր - որս գա - սաս.

2. «Դեր-Ջորի ողբը» (12. էջ 135).
2. "The Lament of Deir ez Zor" (12. p.135)
2. "Плач Дер-эз-Зора" (12. С. 135)

## ԴԵՐ-ՋՕՐԻ ՈՂԲԸ

Երգասաց Նարինե Մուրադյան  
վերձանումը Ալինա Փահլևանյանի

Սա - քաբ - գան գա - քո - դրմ գա - նաշ փա - լի - յոյ.  
 չե - թե - լար օ - քոթ - մըշ մով - վեր քալ - լի - յոյ.

Էր - մա - նի - ա քաբ - դրմ յա - ման աղ - լի - օր.  
 դի - նի բիր աղ - քո - նա գե - դան էր - մա - նի.  
 էր - մա - նի - ա քաբ - դրմ յա - ման աղ - լի - յոյ.  
 դի - նի բիր աղ - քո - նա գե - դան էր - մա - նի.

3. «Տեր Ջոր Չեօլլերի» (13.)
3. "Deir ez Zor Cheolleri" (13.)
3. "Тэр Зор Чеоллери" (13.)

## ՏԵՐ ՋՕՐ ՉԵՕԼԼԵՐԻ

Երգասաց Սարգիս Գոդոյան  
Գրառումը՝ Գևորգ Ազնաւյոյեանի  
Վերձանումը՝ Օնիկ Մարգարյանի

♩ = 100 Allegretto

Պի - տե ն աի - թեր Տին ի - աի աղ - քո - նա  
 Կի - տե նաղ - քո - լար: Քե մախ - քո - դը գե - տա  
 թի - քո - նա - քո - սա - քաբ էաղ - լի սար - դո շոն - լար  
 ճի - կե - քոմ եա - քաբ Երմ - սի սե - կրմ ա - նամ  
 եօ - լո - մա սա - քաբ Կաղ - լիկ եա - քոմ սոյ - սա  
 թօ - նա - դի եա - քաբ:

4. «Տեր Ջոր Չեօլլերի» (այս տարբերակը ի տարբերություն սյուս երեքի հայերեն է) (14.)
4. "Deir ez Zor Cheolleri" (This version, unlike the other one, is in Armenian) (14.)
4. "Тэр Зор Чеоллери" (этот вариант, в отличие от других, на арм. яз. 14)

## ՏԵՐ ՋՕՐ ՉԵՕԼԼԵՐԻ

Երգասաց Մարիկ Դամբարյան  
Գրառումը՝ Գևորգ Ազնաւյոյեանի  
Վերձանումը՝ Օնիկ Մարգարյանի

Ի սր - օր - յս գ - րե - ր սր - քա - տր գի - սր  
 Է - ա - յո սալ - թի.  
 մաք - թիկ. Տեր Ջօ թի չե - յո վե - րս'ման ր - ե - դր  
 գար - յոյ քոթ - քթ. Կր - քո - սր լա - օս - քթ ուր - քո - սա - քոթ - սր  
 Կր - թի - լիս լա - ծն - ցի դուր Ար - եա - քոթ - ներ

Ակներն է այս չորս տարբերակների մեղեդիական կառույցի ընդհանրությունները, որոնք ծավալվում են դորիական ձայնակարգում:

Հաշվի առնելով ներկա աշխարհաքաղաքական խնդիրները և ադրբեջանաթուրքական զավթողական քաղաքականության հետևանքները, փտահարաբ կարող ենք փաստել, որ հայ ժողովրդական երգի ուսումնասիրությունը մշակութային ցեղասպանության համապատկերում

# Նվիրվում է Վ.Սվազյանի ծննդյան 90-ամյակին

երաժշտական հայագիտության կարևորագույն խնդիրներից մեկն է: Եվ ինչպես ասվում է ժողովրդական ասույթում. «Եթե հայու արյուն ունիս մեջդ՝ պիտի պայքարիս» (գրառումը՝ Վ. Սվազյանի):

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Պարսամյան Ս. Ա., Մշակութային ցեղասպանությունը ցեղասպանագիտության տիրույթում, //Վեմ համահայկական հանդես, ԺԱ (ժԷ) տարի, թիվ 4 (68), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2019 թ., 227-244 էջ:
2. Ստեփանյան Գ. Ս., Բաքու քաղաքի հայության պատմությունը (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), /Պատ. խմբ. պատմ. թեկնածու է. Ա. Կոստանյան, Եր., 2011 թ., 650 էջ:
3. Քեչիշյան Ս., հայկական մշակութային եղանակը Օսմանյան Թուրքիայի տարածքում, //Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, 2003 թ., N 7, 124-131 էջ:
4. Կոմիտաս վարդապետ և Խալիտե Էտիպ, //«հայկաշեն» հանդես, Փարիզ, 1943 թ., 6567 էջեր:
5. Վարդանյան Ա., Փահլևանյան Ա., ժողովրդական «Սարի աղիկ» երգի ազգային պատկանելության շուրջ, //Արվեստագիտական հանդես, 2023 թ., N 1, 137-150 էջեր:
6. Սահալյան Լ. Ջ., Կոմիտաս վարդապետը Կ. Պոլսում (Կոմիտասը Պոլսում՝ արվեստագետն ու գոհը), /«Կոմիտաս Վարդապետ» հոդվածների ժողովածու, Եր., Տիգրան Մեծ, 2019, 138-151 էջ:
7. Թումաճյան Ս., հայրենի երգ ու բան, հտ 1, /Խմբ.՝ Ռ. Ա. Աթայան/, հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1972 թ., 264 էջ:
8. //Հայկական հարց հանրագիտարան, Եր., հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, 1991 թ., 348 էջ:
9. Սվազյան Վ. Գ., հայոց ցեղասպանություն. ականատես վերապրողների վկայություններ, /Երկրորդ համալրված հրատ., խմբ.՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Սարգիս Հարությունյան, թուրքերենի խմբ. Տիգրան Տեր-Ողորմիաճյան, Եր., ՀՀ ԳԱԱ Գիտություն., 2011 թ., 880 էջ:
10. Բաղդասարյան Ա. Հ., Հայոց ցեղասպանության մասին ժողովրդական երգերը՝ երաժշտաբանաստեղծական հատկանիշների տեսանկյունով (Վ. Սվազյանի, «Հայոց ցեղասպանություն. ականատես վերապրողների վկայություններ» [Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000] հատորում զետեղված նոտագրված երգերի մասին), /«Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», 2002 թ., N 6, 94 -104 էջեր:
11. Սվազյան Վ. Գ., Մուսա Լեռ, /«Հայ ազգագրություն և բանահյուսություն» մատենաշար, հ. 16, /Պատ. խմբ.՝ բանասիրական գիտությունների դոկտոր Սարգիս Հարությունյան, Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1976 թ., 219 էջ:
12. «Հայրենի երգեր», /Հայրիկ Մուրադյանի ձայնից վերծանեց, կազմեց և խմբագրեց՝ Ալինա Փահլևանյանը, Եր., Նոր զիրք, 2007 թ., 212 էջ:
13. <https://www.houshamadyan.org/arm/themes/songanddance/musicgallery/songsoflamentation.html> [Դիտված՝ 13. 01. 2025 թ., ժ. 15:33]:
14. <https://www.houshamadyan.org/arm/themes/songanddance/musicgallery/songsoflamentation.html> [Դիտված՝ 13.01.2025 թ., ժ. 15:35]:

Parsamyan, S. A., Cultural Genocide within the Domain of Genocide Studies, //Vem, Pan-Armenian Journal, 11th (27th) year, No. 4 (68), October-December, 2019., pp. 227-244.

Stepanyan G. S., The History of the Armenian Population of the City of Baku (A Historical-Demographic Study), /Ed. by E. A. Kostandyan, PhD in History, Yer., 2011, 650 pages.

Keshishyan M., The Armenian Cultural Genocide in the Territory of Ottoman Turkey, //Issues of the History and Histo-

riography of the Armenian Genocide, 2003, No. 7, pp. 124-131.

Komitas Vardapet and Khalide Edip, //Haykashen, Journal, Paris, 1943, pp. 65-67.

Vardanyan, A., Pahlevanyan, A., On the National Belonging of the Folk Song "Sari Aghjik", //Art Studies Journal, 2023, No. 1, pp. 137-150.

Sahakyan, L. Z., Komitas Vardapet in Constantinople (Komitas in Constantinople: The Artist and the Victim), /Komitas Vardapet: Collection of Articles, Yer.: Tigran Mets, 2019, pp. 138-151.

Tumajyan, M., Songs and Sayings of the Homeland, Vol. 1, /Ed. by R. A. Atayan, Yer.: ArmSSR Academy of Sciences Publishing House, 1972, 264 pages.

Armenian Question Encyclopedia, /Chief Editorial Office of the Armenian Encyclopedia, Yerevan, 1991, 348 pages.

Svazlian, V. G., The Armenian Genocide: Eyewitness Testimonies of Survivors, /Second revised edition, ed. by Corresponding Member of NAS RA Sargis Harutyunyan, Turkish edition ed. by Tigran Ter-Oghormyachyan, Yer.: NAS RA Gitutyun, 2011, 880 pages.

Baghdasaryan, A. H., Folk Songs about the Armenian Genocide from the Perspective of Music-Poetic Characteristics (on the Notated Songs in V. Svazlian's "The Armenian Genocide: Eyewitness Testimonies of Survivors" [Yer.: NAS RA Gitutyun, 2000]), /Issues of the History and Historiography of the Armenian Genocide, 2002, No. 6, pp. 94-104.

Svazlian, V. G., Musa Dagh, /Armenian Ethnography and Folklore Series, Vol. 16, Ed. by Sargis Harutyunyan, Doctor of Sciences in Philology, Yer.: ArmSSR Academy of Sciences Publishing House, 1976, 219 pages.

Songs of the Homeland, /Transcribed, compiled, and edited from Hayrik Muradyan's recordings by Alina Pahlevanyan, Yer.: Nor Girk, 2007, 212 pages.

- 13. <https://www.houshamadyan.org/arm/themes/songanddance/musicgallery/songsoflamentation.html> [Accessed: January 13, 2025, 15:33].
- 14. <https://www.houshamadyan.org/arm/themes/songanddance/musicgallery/songsoflamentation.html> [Accessed: January 13, 2025, 15:35].

## REFERENCES

1. Parsamyan S. A., Mshakuthayin tzeghaspanuthyun' tzeghaspanuthyan tiruythum, //Vem, hamahaykakan handes, XI ZhA (XVII ZhE) tari, thiv 4 (68), hoktember-dektember, 2019 th., 227-244 eej:
2. Stepanyan G. S., Baqu qaghaqi hayuthyan patmuthyun' (patmazhoghvrdragakan usumnasiruthyun), /Pat. xmb. patm. theknatsu E. A. Kostandyan, Yer., 2011 t., 650 ej:
3. Qeshoshyan M., Haykakan mshakuthayin yeghern' Osmanyan Thurqiayi taratsqum, //Hayotz tzeghaspanuthyan patmuthyan ev patmagruthyan hartzer, 2003 th., N 7, 124-131 eej:
4. Komitas vardapet ew Xalite Etip, //Hayk&ben, handes, Pariz, 1943 th., 65—67 eej:
5. Vardanyan A., Pahlewanyan A., Zhoghovrdakan "Sari aghjik" yergi azgayin patkaneluthyan shurj, //Arvestagitan handes, 2023 th., N 1, 137—150 eej:
6. Sahakyan L. Z., Komitas vardapet՝ K. Polsum (Komitas՝ Polsum arvestagetn u zoh՝), /Komitas Vardapet, hodvatsneri zhoghovatsu, Yer.: Tigran Mets, 2019, 138-151 eej.
7. Tumadchan M., Hayreni yerg u ban, ht 1, /Xmb. R. A. Athayan, Yer.: HaykakanSSH GA hrat., 1972 th., 264 ejj
8. //Haykakan harc՝ hanragitaran, Yer., Haykakan hanragitarani glkhavor khmbagruthyun, 1991 th., 348 eej.
9. Svazlyan V. G., Hayotz tzeghaspanuthyun՝ akanates veraprogneri vkayuth'yunner, /Erkrord hamalrvats hrat., xmb.

## Նվիրվում է Վ.Սվազյանի ծննդյան 90-ամյակին

- HH GAA thgthakitz andam Sargis Haruthyunyan, thurqeremi xmb. Tigran Ter-Voghormiadchyan, Yer.: HH GAA Gituthyun., 2011 th., 880 eej.
10. *Bagdasaryan A. H.*, Hayotz tzeghaspanuthyan masin zhoghovrdakan yerger yerazhshtabanasteghsakan hatkanisheri tesankyunov (V. Svazlyani, Hayotz tzeghaspanuthyun. akanates veraprogghneri vkayuthyunner', [Yer.: HH GAA Gituthyun., 2000] hatorum zeteghvats notagravats yergeri masin), /Hayotz tzeghaspanuthyan patmuthyan ev patmagruthyan hartzer', 2002 th., N 6, 94 —104 ejer:
11. *Svazlyan V. G.*, Musa Ler, /Hay azgagruthyun ev banahyusuthyun' matenashar, h. 16, Pat. xmb. banasirakan gituthyunneri doktor Sargis Haruthyunyan, Yer.: Haykakan SSH GA hrat., 1976 th., 219 eej.
12. Hayreni erger, /Hayrik Muradyani dzhaynitz vertsanetz, kazmetz ev xmbagretz Alina Pahlevanyan', Yer.: Nor girq., 2007 th., 212 eej:

**Հեղինակի մասին.** ՎԱՀԵ ՌՈՄԻԿԻՎԻՉ ԳԵՎՈՐԳՅԱՆ 2016 – 2020 թթ. սովորել և ավարտել է Երևանի Ա. Բաբաջանյանի անվան պետական երաժշտամանկավարժական քոլեջը (մասնագիտական որակավորում՝ երաժիշտ-կատարող, դասական դրոմբ/դուդուկահար): 2020 – 2022 թթ. զինվորական ծառայության է անցել Արցախի Հանրապետության Պաշտպանության բանակում: Այժմ սովորում է Երևանի Գոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում (երաժշտագիտական բաժին, բակալավր, 2-րդ կուրս): Զեկուցումներով հանդես է եկել ԵՊԿ ՈւԳՍԸ կազմակերպած գիտաժողովներին (2018 - 2019, 2023 – 2024 թթ.), ԵՊՀ ՈւԳԸ Ուսանողական միջազգային գիտաժողովին (2019 թ.): Զեկուցումների համար գրված հոդվածներից երկուսը հրատարակվել են 2018 և 2020 թվականներին՝ Գևորգյան Վ., Խաչատուր Աբովյանը և հայկական երաժշտական մշակույթը, «Հայ կոմպոզիտոր» 1-2 (3-4) 2018, էջ 44–51: Խ. Աբովյանը հայկական երաժշտական մշակույթում, ԵՊՀ ՈւԳԸ Գիտական հոդվածների ժողովածուում, 1գ3 (33), 2020, էջ 245 -257:

**About the author:** VAHE ROMIK GEVORGYAN From 2016 to 2020, he studied at and graduated from the Arno Babajanyan State Musical-Pedagogical College of Yerevan with a professional qualification as a musician-performer and teacher (duduk player). From 2020 to 2022, he served in the Defense Army of the Republic of Artsakh. He is currently pursuing a bachelor's degree (2nd year) in the Department of Musicology at Yerevan State Conservatory after Komitas. He has presented papers at scientific conferences organized by the YSC Student Scientific Society (2018-2019, 2023-2024), as well as at the YSU International Student Scientific Conference (2019). Two of his articles based on these presentations were published in 2018 and 2020: Gevorgyan, V., "Khachatur Abovyan and the Armenian Musical Culture", "Armenian Composer", N 1-2 (3-4), 2018, pp. 44-51. "Kh. Abovyan in the Armenian Musical Culture", The article was also published as a conference paper in the Proceedings of the YSU Student Scientific Society, vol. 1 N 3 (33), 2020, pp. 245-257.

**Сведения об авторе:** ВАГЕ РОМИКОВИЧ ГЕВОРГЯН. Окончил Государственный музыкально-педагогический колледж им. Бабаджаняна (музыкант-исполнитель, преподаватель/дудукист, 2020). Прошел военную службу в армии обороны Республики Арцах (2020-2022). В настоящее время учится в Ереванской государственной консерватории имени Комитаса (музыкаведческий факультет, бакалавр, 2 курс). Выступал с докладами на конференциях, организованных ОГС ЕГК (2018-2019, 2023-2024). На международной студенческой конференции СНО ЕГУ (2019). Две из статей, написанных для отчетов, были опубликованы в 2018 и 2020 годах - "Хачатур Абовян и армянская музыкальная культура", //Армянский композитор., 1- 2 (3-4) 2018, С. 44-51; "Х. Абовян в армянской музыкальной культуре", / Сборник научных статей СНО ЕГУ, 1г3 (33), 2020, С. 245 -257.